

Նոյն տեղական աւանդութիւնը կը սորվեցընէ մեզի, որ ուրիշ պարսպապատ հայ եկեղեցի մ'ալ կար այժմու ժողովրդապետական եկեղեցիէն ոչինչ հեռի, ուր այժմ քաղաքային մնաւաճառանոցք կան: Այս աւանդութիւնն ստուգեցաւ՝ երբ քանի մը տարի յառաջ Նոյն մնաւաճառի շուկային հիմը կը դրուէր, գըտնուեցան եկեղեցւոյ մը հիմունքն եւ հայերէն տապանաքարեր:

Սակայն Մոլոտաւիոյ Հայերն ունեցան նաեւ իրենց տառապանքները, ոչ թէ Ռոմանացի ժողովրդենէ, այլ ասոնց քանի մ'իշխաններէն: Այսպէս Սրբեֆանիցա (Ստեփան Ե) Փոքր կամ Անագորոյն իշխանն՝ երբ 1526ին Վալաքիայէն ետ կը դառնար աւարաւ, Վասլուի Հայոց մեծ հասարակութիւնը հալածեց եւ իրենց եկեղեցին կործանեց<sup>72</sup>: Անշուշտ առ այս գրգռեց զինք Վասլուի քաղաքացեաց երեսփոխաններու տըրտունջն, որոնք արդէն վերոյիշեալ արշաւանաց սկիզբն՝ մատուցած էին իշխանին իրենց տըրտունջն Վասլուի Հայոց առեւտրական ճնշումներուն դէմ<sup>73</sup>: Այս անագորոյն իշխանին պատուհասն արդէն 1527 Յնր. 12ին ի Հոթին վրայ հասաւ, ուր ամուսինն զինք թունաւորեց թշնամի Լեհաց խորհրդովն, որոնք իրմէ կը վախնային<sup>74</sup>:

Այլ մեծագոյն եւս էր՝ Ռոմանացւոց պատմութեան մէջ իբրեւ մեծ բռնաւոր<sup>75</sup> ճանչցուած Ստեփան Ռարէշ Է (1551—1552) իշխանին Մոլոտաւիոյ Հայոց հասուցած նեղութիւնքն: Յա-